«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի
գիտխորհրդի «18» ապրիլի 2015թ.
նիստով (արձ. № 9 /
գիտխորհրդի նախագահ՝
տնօրեն՝ Մ. ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« 18 » ապրիլի 2015թ. ք. Իջևան

ՀՈԴՎԱԾ 1. *Կարգի գործողության ոլորտը և կարգավորման առարկան*

Սույն կարգով սահմանվում և կարգավորվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների դիմումները, բողոքները և առաջարկությունները օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում քննարկելու, նրանց իրավունքների և օրենքով պաշտպանվող շահերի խախտման փաստերին արձագանքելու և այդ խախտումները կանխելու ու վերացնելու առնչությամբ ծագող հարաբերությունները:

ՀՈԴՎԱԾ 2. *Դիմումին, բողոքին և առաջարկությանը ներկայացվող պահանջները*

Ուսանողների դիմումը, բողոքը և առաջարկությունը պետք է ստորագրված լինի՝ նշելով նրա ազգանունը, անունը և հայրանունը, ֆակուլտետը, կուրսը, խումբը և գրելու օրը:

Առանց հիշյալ տեղեկությունների՝ դիմումը, բողոքը և առաջարկությունը համարվում է անստորագիր, չի քննարկվում և սահմանված կարգով ոչնչացվում է: Դիմումը, բողոքը և առաջարկությունը չի քննարկվում նաև այն դեպքում, եթե պարզվում է, որ դրա հեղինակի ինքնության վերաբերյալ տվյալները կեղծ են:

ՀՈԴՎԱԾ 3. *Դիմումների, բողոքների և առաջարկությունների տնօրինման կարգը*

Ուսանողները իրենց դիմումները, բողոքները և առաջարկությունները ժամանակին և օրենքով սահմանված կարգով քննարկելու նպատակով հանձնում են մասնաճյուղի քարտուղարություն:

Եթե դիմումի, բողոքի և առաջարկության մեջ առաջարկված հարցերի լուծումը վերապահված չէ մասնաճյուղի տնօրենին, ուստի այն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում ուղարկվում է ըստ պատկանելության և այդ մասին ծանուցվում է դիմողներին:

Արգելվում է ուսանողների դիմումների և բողոքների քննարկումը և լուծումն ուղարկել այն պաշտոնատար անձանց, որոնց գործողությունները բողոքարկվում են:

- Ուսանողների այն դիմումները, որոնք կապված են ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի, դասախոսների, ուսումնաօժանդակ ծառայության ոլորտի աշխատակիցների գործողությունների և վարքագծի հետ, կարող են քննարկվել միայն մասնաճյուղի տնօրենության նիստերում՝ դիմողի և կոնկրետ աշխատակցի մասնակցությամբ:

- Ուսումնական գործընթացի զարգացմանն ու կատարելագործմանը վերաբերվող առաջարկությունները կարող են քննարկվել մասնաճյուղի գիտական խորհրդի, տնօրենության կամ ամբիոնների նիստերում, որտեղ ընդունված որոշումները կիրացվեն տնօրենի հրամանով:

ՀՈԴՎԱԾ 4. *Պաշտոնատար անձանց պարտականությունները*

ա/ ընդունել և իրենց լիազորությունների սահմաններում քննարկել ուսանողների դիմումները, բողոքները և առաջարկությունները, պատասխանել դրանց արդյունքների մասին և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

բ/ դիմումը, բողոքը և առաջարկությունը քննարկել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ՝ բացահայտելով ներկայացված խնդրի լուծման համար բոլոր հանգամանքները: Քննարկման արդյունքով մասնաճյուղի տնօրենը ընդունում է համապատասխան որոշում /հրաման, կարգադրություն/:

Կայացված որոշումը պետք է լինի հստակ և հասկանալի՝ նշելով նրա ընդունման օրը, ամիսը և տարեթիվը, վավերացված համապատասխան ստորագրությամբ, որի մեկ օրինակը երեքօրյա ժամկետում ներկայացվում է դիմատուին:

ՀՈԴՎԱԾ 5. *Դիմումի, բողոքի և առաջարկության քննարկման ժամկետները*

Ուսանողների դիմումները, բողոքները և առաջարկությունները ընթացք են տրվում դրանք ստանալուց հետո մինչև մեկ ամսվա ընթացքում, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն և ստուգում չպահանջվող դիմումներն ու բողոքները՝ 15 օրվանից ոչ ուշ:

Այն դեպքում, երբ դիմումին կամ բողոքին ընթացք տալու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ ստուգում, պահանջել լրացուցիչ նյութեր կամ ձեռնարկել այլ միջոցներ, ապա ընթացք տալու ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով: Դիմումների և բողոքների ընթացքը համարվում է ավարտված, երբ ձեռնարկված միջոցների մասին պատասխանվել է ուսանողին: Պատասխանը տրվում է գրավոր կամ դիմումի հեղինակի համաձայնությամբ՝ բանավոր:

ՀՈԴՎԱԾ 6. *Դիմումների, բողոքների քննարկման կարգն ու դրանց առանձնահատկությունները*

Առանձին դեպքերում ուսանողների դիմումներն ու բողոքները կարող են վերցվել հատուկ հսկողության տակ, և դրանց կատրման համար սահմանվում են անհատական ժամկետներ: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենությունը պարբերաբար վերլուծում և ընդհանրացնում է ստացված դիմումների, բողոքների և առաջարկությունների մեջ բարձրացված հարցերը, քննադատականի դիտողությունները և միջոցներ է ձեռնարկում հաստատությունում ուսուցման և ուսանողների այլ հարցերի հետ կապված իրավունքների պաշտպանության և ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելուն համար:

ՀՈԴՎԱԾ 7. *Պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկումը*

Եթե ուսանողը համաձայն չէ իր առաջարկությա, դիմումի կամ բողոքի առթիվ ընդունված որոշման հետ, ապա նա կարող է այդ որոշումը բողոքարկել ըստ վերադասության;